ՀՀ ԴԱՏԱՎՈՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկրորդ՝ լրամշակված հրատարակություն

ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5
Ընդհանուր դրույթներ 8
Դատավորի վարքագծի կանոններն արդարադատություն իրականացնելիս 17
Դատավորի վարքագծի կանոնները ոչ դատական գործունեության ընթացքում 58
Դատավորների էթիկայի հարցերով վարույթ իրականացնող մարմինները և Վարույթի կարգը 74

Հավելված. 1
Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի որոշումներ 79

Հավելված. 2
Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքներ 100

Հավելված. 3
Միացյալ ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական խորհուրդ (ECOSOC), բանաձև 2007/22 214

Հավելված. 4
Միացյալ ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական խորհուրդ (ECOSOC), բանաձև 2006/23 218

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԲԱՆԳԱԼՈՐՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը որպես հիմնարար սկզբունք երաշխավորում է, որ բոլոր անձինք հավասար են դատարանի առջև և յուրաքանչյուր անձի դեմ ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության կամ իրավունքների ու պարտականությունների որոշման ընթացքում ունեն օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի և հրապարակավ քննության իրավունք,

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ վերոնշյալ հիմնարար սկզբունքները և իրավունքները նաև ճանաչվում կամ արտացոլվում են մարդու իրավունքների տեղական փաստաթղթերում, ազգային սահմանադրություններում, օրենսդրության և ընդհանուր իրավունքի մեջ, ինչպես նաև դատական սովորույթներում և ավանդույթներում:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ իրավասու, անկախ և անաչառ դատական համակարգը մեծ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համար, քանի որ մյուս բոլոր իրավունքների իրականացումը լիովին կախված է արդարադատության պատշաճ իրականացումից,

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ իրավասու, անկախ և անաչառ դատական համակարգը կարևոր է նաև դատարանների համար՝ սահմանադրականությունը և օրենքի գերակայությունը պահպանելու հարցում իրենց դերն իրականացնելու համար,

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ դատական համակարգի, ինչպես նաև բարոյական հարցերում դրա հեղինակության, ազնվության ու անկաշառելիության հանդեպ ունեցած հասարակության վստահությունը չափազանց կարևոր է ժամանակակից ժողովրդավարական հասարակության մեջ,

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ կարևոր է, որպեսզի դատավորները, անհատապես և հավաքական ձևով, հարգանքով և պատվով վերաբերվեն իրենց պաշտոնին՝ գիտակցելով հասարակության կողմից տածած վստահության չափը, և ձգտեն մեծացնել ու պահպանել վստահությունը դատական համակարգի հանդեպ:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ դատավորի վարքագծի բարձր չափանիշների ապահովումը և պահպանումը յուրաքանչյուր պետության դատական համակարգի հիմնական պարտականությունն է:

Ինչպես նաև ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Միավորված ազգերի կազմակերպության Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները կոչված են ապահովելու և նպաստելու դատական համակարգի անկախությանը և հիմնականում ուղղված են պետություններին:

ՆԵՐՔՈՀԻԾՅԱԼ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ նպատակ ունեն սահմանելու դատավորի վարքագծի չափանիշները: Նրանք դատավորների համար ծառայում են որպես ուղենիշ և հնարավորություն են տալիս դատական մարմիններին կարգավորել դատավորների վարքագիծը: Նրանք նաև նախատեսված են օժանդակելու գործադիր և օրենսդիր մարմիններին, փաստաբաններին և հասարակությանն առհասարակ ավելի լավ ըմբռնելու և աջակցելու արդարադատության իրականացման գործընթացին: Ստորև բերված սկզբունքները ենթադրում են, որ դատավորները իրենց վարքագծի համար հաշվետու են համապատասխան հաստատություններին, որոնք ստեղծված են պահպանելու դատական չափանիշները, գործում են անկախ և անաչառ, նպատակ ունեն բարձրացնելու, այլ ոչ՝ նվազեցնելու դատավորներին միավորող գործող իրավական նորմերի և վարքագծի կանոնների նշանակությունը:

Յուցիչ 1

Անկախություն

Սկզբունք

Դատական մարմինների անկախությունը հանդիսանում է իրավունքի գերակայության ապահովման անհրաժեշտ նախապայմանը և արդար դատաքննության հիմնական երաշխիքը: Հետևաբար, դատավորը պարտավոր է պահպանել և կյանքի կոչել դատական համակարգի անկախության սկզբունքն ինչպես անհատական, այնպես էլ ինստիտուցիոնալ առումներով:

Կիրառում

1.1 Իր ծառայական պարտականություններն իրականացնելիս դատավորը պետք է գործի անկախ՝ բացառապես հիմնվելով փաստերի գնահատման և օրենքի իմացության վրա, ազատ լինելով կողմնակի ցանկացած ազդեցությունից, դրդումներից, ճնշումներից, սպառնալիքներից կամ ուղղակի կամ անուղղակի միջամտություններից, որոնք տարբեր նպատակներ են հետապնդում:

1.2 Հասարակայնության հետ և մասնավորապես դատավարության կողմերի հետ առնչվելիս դատավորը պետք է անկախ լինի:

1.3 Դատավորը պարտավոր է ոչ միայն զերծ մնալ իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի հետ ունեցած իր կոչմանն անհարիր հարաբերություններից և նրանց ազդեցությունից, այլ նաև անկախ մարդու տպավորություն ստեղծել անկողմնակալ դիտորդի մոտ:

1.4 Ծառայական պարտականություններն իրականացնելիս, մասնավորապես՝ դատական որոշումներ կայացնելիս դատավորը պարտավոր է անկախ լինել իր դատավոր–գործընկերներից:

1.5 Դատական համակարգի ինստիտուցիոնալ և օպերատիվ անկախությունը պահպանելու և բարձրացնելու համար դատավորը պարտավոր է խրախուսել և պաշտպանել դատավորների ծառայական պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ երաշխիքները:

1.6 Դատավորը պարտավոր է ցուցաբերել և խթանել դատավորի վարքագծի բարձր չափանիշներ՝ ամրապնդելու հասարակության վստահությունը դատական համակարգի հանդեպ ինչն առաջնային նշանակություն ունի դատական մարմինների անկախության պահպանման համար:

Ցուցիչ 2

Անաչառություն

Սկզբունք

Դատավորի անաչառությունն անհրաժեշտ պայման է ծառայական պարտականությունների պատշաճ իրականացման համար: Այն վերաբերում է ոչ միայն բուն վճռին, այլ նաև վճիռը կայացնելուց առաջ տեղի ունեցող դատավարական գործողություններին:

Կիրառում

2.1 Դատավորը պարտավոր է իր ծառայական պարտականություններն իրականացնել առանց նախապատվության, կողմնակալության կամ խտրականության:

2.2 Դատական նիստի ժամանակ և դատարանի շենքից դուրս դատավորն իր վարքագծով պետք է նպաստի հանրության, իրավաբանի մասնագիտության ներկայացուցիչների և դատավարության կողմերի վստահության պահպանմանն ու բարձրացմանը դատավորի և դատական համակարգի անաչառության հանդեպ:

2.3 Դատավորը պետք է հնարավորինս իրեն այնպես պահի, որպեսզի նվազագույնի հասցնի դատական նիստը վարելու կամ դատական գործի վերաբերյալ որոշում կայացնելու համար բացարկի հիմք հանդիսացող դեպքերը:

2.4 Դատավորը պետք է ձեռնպահ մնա մեկնաբանություններ անել այն գործի կապակցությամբ, որը քննվում է կամ հնարավոր է, որ կքննվի, ինչը կարող է ողջամտորեն ազդել գործի դատավարության ելքի վրա կամ կասկածի տակ առնել գործընթացի արդար իրականացումը: Դատավորը պետք է ձեռնպահ մնա նաև հրապարակային կամ այլ մեկնաբանություններից, որոնք կարող են ազդել անձի կամ խնդրի արդար դատաքննության վրա:

2.5 Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել բոլոր այն դեպքերում, երբ նա չի կարող գործով անաչառ որոշում կայացնել կամ երբ անկողմնակալ դիտորդին թվում է, թե նա ի վիճակի չէ տվյալ գործով անաչառ որոշում կայացնել: Նման գործերը ներառում են, սակայն չեն սահմանափակվում այն դեպքերով, երբ՝

2.5.1 Դատավորն իրական կողմնակալություն կամ խտրականություն է ցուցաբերել կողմերից մեկի նկատմամբ կամ դատավորին սեփական աղբյուրներից հայտնի են դարձել ապացուցողական բնույթի վիճելի փաստեր, որոնք վերաբերում են գործի քննությանը:

2.5.2 նույն վեճի առարկա գործով դատավորը նախկինում հանդես է եկել որպես փաստաբան կամ կարևոր վկա, կամ

2.5.3 դատավորը կամ դատավորի ընտանիքի անդամը նյութական շահ ունի վեճի առարկա գործի ելքով:

Դատավորի բացարկ չի կարող պահանջվել, եթե այլ դատավոր չի կարող նշանակվել տվյալ գործը քննելու համար կամ, գործի հրատապությունից ելնելով, դատավորի կողմից գործը չքննելը կարող է լուրջ դատական սխալի հանգեցնել:

Ցուցիչ 3

Ազնվություն և անկաշառելիություն

Սկզբունք

Ազնվությունն ու անկաշառելիությունն անհրաժեշտ պայման են դատավորի ծառայական պարտականությունների պատշաճ իրականացման համար:

Կիրառում

3.1 Դատավորի վարքագիծն անկողմնակալ դիտորդի տեսանկյունից պետք է անթերի լինի:

3.2 Դատավորի գործողությունները և վարքագիծը պետք է ամրապնդեն ժողովրդի հավատը հանդեպ դատական համակարգի ազնվությունն ու անկաշառելիությունը: Արդարադատությունը ոչ միայն պետք է իրականացվի, այլ պետք է իրականացվի հասարակության համար տեսանելի ձևով:

Ցուցիչ 4

Վարքագծի կանոնների պահպանումը

Սկզբունք

Վարքագծի կանոնների պահպանումը և դրա դրսևորումը դատավորի ողջ գործունեության կարևորագույն մասն է:

Կիրառում

4.1 Դատավորը պետք է պահպանի վարքագծի կանոնները և դատավորի պաշտոնի հետ կապված ցանկացած գործողություն կատարելիս զերծ մնա ոչ պատշաճ տպավորություն թողնելուց:

4.2 Որպես հասարակության սևեռուն ուշադրության առարկա՝ դատավորը պարտավոր է գիտակցաբար և ինքնակամ իր համար ընդունել անձնական սահմանափակումներ, չնայած նրան, որ դրանք շարքային քաղաքացու համար կարող են դժվար իրականանալի թվալ: Մասնավորապես՝ դատավորի վարքագիծը պետք է համապատասխանի դատավորի պաշտոնի արժանապատվությանը:

4.3 Այն դատարանում, որտեղ դատավորն աշխատում է, մշտապես գործունեություն ծավալող փաստաբանների հետ ունեցած իր անձնական հարաբերություններում դատավորը պետք է խուսափի այնպիսի իրավիճակներից, որոնք կարող են հիմնավոր կասկածի կամ որևէ կողմին հատուկ վերաբերմունքի արժանացնելու կամ կողմնապահության տպավորություն ստեղծել:

4.4 Դատավորը չի մասնակցում այն գործի քննությանը, որում դատավորի ընտանիքի որևէ անդամ հանդես է գալիս որպես դատավարության կողմ կամ որևէ կերպ առնչություն ունի գործի հետ:

4.5 Դատավորը չի տրամադրում իր բնակարանը փաստաբաններին՝ իրենց վստահորդներին կամ գործընկերներին ընդունելու համար:

4.6 Դատավորը, ինչպես ցանկացած այլ քաղաքացի, ունի ազատ արտահայտվելու, դավանանքի, միավորման և հավաքների իրավունք, սակայն այդ իրավունքների իրականացման ճանապարհին դատավորը միշտ պետք է դրսևորի իրեն այնպես, որ բարձր պահի դատավորի պաշտոնի համբավը և զերծ մնա այնպիսի գործողություններից, որոնք անհամատեղելի են դատական իշխանության անաչառության և անկախության հետ:

4.7 Դատավորը պետք է տեղեկացված լինի գաղտնի բնույթի իր անձնական և նյութական շահերի մասին, ինչպես նաև ողջամիտ միջոցներ ձեռնարկի տեղեկանալու իր ընտանիքի անդամների նյութական շահերի մասին:

4.8 Դատավորը չպետք է թույլ տա, որպեսզի իր ընտանիքի անդամները, սոցիալական կամ այլ տիպի հարաբերությունները ոչ պատշաճ ձևով ազդեն դատավորի գործառույթների իրականացման հետ կապված իր գործողությունների, ինչպես նաև իր կողմից կայացվող դատական ակտերի վրա:

4.9 Դատավորն իրավունք չունի դատական համակարգի հեղինակությունն օգտագործել կամ թույլ տալ, որ այն օգտագործվի դատավորի, դատավորի ընտանիքի անդամի կամ մեկ այլ անձի անձնական շահերն առաջ տանելու նպատակով: Դատավորը չպետք է այնպիսի տպավորություն ստեղծի կամ թույլ տա, որ ուրիշները տպավորություն ստեղծեն, որ դատավորի լիազորությունների իրականացման վրա որևէ մեկն անհարկի ազդեցություն է գործում:

4.10 Դատավորին ի պաշտոնե հայտնի դարձած գաղտնի տեղեկությունները չպետք է օգտագործվեն կամ բացահայտվեն դատավորի կողմից իր պարտականությունների կատարման հետ կապ չունեցող որևէ նպատակով:

4.11 Իր պարտականությունները պատշաճ կատարելու դեպքում դատավորն իրավունք ունի՝

4.11.1 զբաղվել գրական գործունեությամբ, դասախոսություններ կարդալ, դասավանդել և մասնակցել իրավունքի, իրավական համակարգի, արդարադատության իրականացման կամ նմանատիպ այլ հարցերի հետ առնչվող միջոցառումներում,

4.11.2 Հրապարակային լսումների ժամանակ հանդես գալ պաշտոնական մարմնի առջև իրավունքի, իրավական համակարգի, արդարադատության իրականացման և այլ նմանատիպ հարցերով:

4.11.3 Պաշտոնական մարմնի կամ այլ պետական կոմիտեի, հանձնաժողովի, խորհրդակցական մարմնի անդամ լինելը, եթե նման անդամակցությունը չի խանգարում դատավորին լինել անաչառ և պահպանել քաղաքական չեզոքություն:

4.11.4 Զբաղվել այլ գործունեությամբ, եթե այդ գործունեությունը համապատասխանում է դատավորի պաշտոնի բարձր համբավին կամ այլ կերպ չի խոչընդոտում դատավորի պարտականությունների կատարմանը:

4.12 Դատավորի պաշտոնը զբաղեցնելու պահին դատավորը չպետք է զբաղվի իրավաբանական գործունեությամբ:

4.13 Դատավորն իրավունք ունի հիմնել դատավորների միություն կամ դառնալ դրա անդամ, կամ էլ մասնակցել դատավորների շահերը ներկայացնող այլ կազմակերպությունների գործունեությանը:

4.14 Դատավորը և դատավորի ընտանիքի անդամները չպետք է պահանջեն կամ ընդունեն որևէ նվեր, ժառանգություն, վարկ կամ ծառայություն ի հատուցումն այն բանի, որ արվել է, կարվի կամ չի արվել իր կողմից ծառայական պարտականությունները կատարելիս:

4.15 Դատավորը գիտակցաբար չպետք է թույլ տա դատարանի աշխատակիցներին կամ իր ազդեցության, իշխանության կամ ղեկավարության ներքո գտնվող այլ անձանց պահանջել կամ ընդունել որևէ նվեր, ժառանգություն, վարկ կամ ծառայություն ի հատուցումն այն բանի, որ արվել է, կարվի կամ չի արվել իր կողմից ծառայական պարտականությունները կամ գործառույթները կատարելիս:

4.16 Օրենքով նախատեսված դեպքերում և տեղեկատվության բացահայտման մասին օրենքով նախատեսված պահանջների համաձայն դատավորը կարող է համապատասխան առիթներով հիշարժան նվեր, պարգև և արտոնություն ստանալ, եթե դրանք մտադիր չեն որևէ կերպ ազդել դատավորի պարտականությունների կատարման վրա կամ տպավորություն ստեղծել դատավորի կողմնակալ լինելու մասին:

Ցուցիչ 5

Հավասարություն

Սկզբունք

Դատավարության բոլոր կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի ապահովումը կարևոր պայման է դատական համակարգի պատշաճ գործունեության համար:

Կիրառում

5.1 Դատավորը պարտավոր է գիտակցել և հասկանալ հասարակության մեջ եղած բազմազանությունը և տարբերությունները, որոնք ծագում են զանազան աղբյուրներից, այդ թվում՝ ռասայական պատկանելությունը, մաշկի գույնը, սեռը, դավանանքը, ազգային ծագումը, կաստային պատկանելությունը, հաշմանդամությունը, տարիքը, ամուսնական կարգավիճակը, սեռական կողմնորոշումը, սոցիալական կամ տնտեսական կարգավիճակը և այլ նմանատիպ հանգամանքներ (*«գործին չվերաբերող հիմքեր»*):

5.2 Դատավորը, իր ծառայական պարտականություններն իրականացնելիս, ո՛չ իր ելույթով, և ո՛չ էլ իր վարքագծով չպետք է դրսևորի նախատրամադրվածություն կամ կողմնակալություն դատավարության որևէ անձի կամ խմբի նկատմամբ՝ առաջնորդվելով գործին չվերաբերող հանգամանքներով:

5.3 Դատավորը պետք է կատարի իր ծառայական պարտականությունները՝ պատշաճ կերպով հաշվի առնելով բոլոր անձանց, մասնավորապես՝ դատավարության կողմերի, վկաների, իրավաբանների, դատարանի աշխատակազմի և դատավորի գործընկերների շահերը՝ չտարանջատելով գործին չվերաբերող հանգամանքները, որոնք էական չեն գործի պատշաճ քննության համար:

5.4 Դատավորը չպետք է գիտակցաբար թույլ տա դատարանի աշխատակազմին կամ իր ազդեցության, ղեկավարության կամ վերահսկողության ներքո գտնվող անձանց դրսևորել տարբերակված մոտեցում դատական գործով որևէ անձի նկատմամբ՝ առաջնորդվելով գործին չվերաբերող որևէ հիմքով:

5.5 Դատավորը պետք է պահանջի դատական գործով մասնակցող իրավաբաններից իրենց ելույթներում կամ վարքագծով զերծ մնալ անհիմն կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելուց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք իրավական տեսանկյունից առնչվում են դատական վեճի առարկայի հետ և կարող են օրինական ձևով արդարացված լինել:

Յուցիչ 6

Որակավորում և ջանասիրություն

Սկզբունք

Որակավորումը և ջանասիրությունը կարևոր նախադրյալներ են դատական համակարգի պատշաճ գործունեության համար:

Կիրառում

6.1 Դատավորի ծառայական պարտականությունները գերակա են գործունեության մյուս բոլոր ձևերի նկատմամբ:

6.2 Դատավորն իր մասնագիտական գործունեությունը նվիրում է իր ծառայական պարտականությունների կատարմանը, որի մեջ մտնում են ոչ միայն դատարանում դատավորի գործառույթների և պարտականությունների կատարումը, ինչպես նաև որոշումներ կայացնելը, այլ նաև՝ դատավորի պաշտոնին և դատարանի գործառույթին վերաբերող այլ աշխատանքներ:

6.3 Դատավորը պարտավոր է համապատասխան միջոցներ ձեռնարկել ծառայական պարտականությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ իր գիտելիքների, հմտությունների և անձնական հատկանիշների շարունակական կատարելագործման ուղղությամբ՝ այդ նպատակներին հասնելու համար օգտվելով վերապատրաստման և այլ հնարավորություններից, որոնք դատական վերահսկողության պայմաններում մատչելի են դատավորների համար:

6.4 Դատավորը պետք է տեղյակ լինի միջազգային իրավունքի զարգացումների, այդ թվում նաև՝ մարդու իրավունքների նորմերը սահմանող այլ գործիքների և միջազգային կոնվենցիաների մասին:

6.5 Դատավորը պարտավոր է արդյունավետ, արդարացի և ողջամիտ արագությամբ կատարել իր բոլոր պարտականությունները, այդ թվում՝ որոշում կայացնել հետաձգված գործերի վերաբերյալ:

6.6 Բոլոր դատական նիստերի ընթացքում դատավորը պետք է պահպանի հասարակական կարգ ու կանոն և պարտավոր է համբերատար, արժանապատիվ և բարեկիրթ վերաբերմունք դրսևորել գործով կողմերի, երդվյալ ատենակալների, վկաների, իրավաբանների և բոլոր այն անձանց հանդեպ, ում հետ առնչվում ի պաշտոնե: Դատավորը նման վարքագիծ պետք է պահանջի նաև կողմերի օրինական ներկայացուցիչներից, դատարանի աշխատակազմից և դատավարության մասնակից բոլոր անձանցից, ովքեր գտնվում են դատավորի ազդեցության, ղեկավարության կամ վերահսկողության ներքո:

6.7 Դատավորը չպետք է զբաղվի այնպիսի գործունեությամբ, որն անհամատեղելի է մասնագիտական պարտականությունների ջանասիրաբար կատարման հետ:

ԿԻՐԱՌՈՒՄ

Ելնելով դատավորի պաշտոնի առանձնահատկություններից ազգային դատական մարմինները պարտավոր են արդյունավետ միջոցներ ընդունել սույն սկզբունքների կիրառման մեխանիզմներ նախատեսելու համար, եթե նմանատիպ մեխանիզմներ դեռևս չեն գործում իրենց իրավական համակարգում:

Սահմանումներ

Սույն սկզբունքների ձևակերպումներում օգտագործված բառերն ունեն հետևյալ նշանակությունը՝ բացառությամբ, եթե համատեքստում այլ իմաստ է ենթադրվում կամ պահանջվում:

«Դատարանի աշխատակազմ»	դատավորի անձնական աշխատակազմը, այդ թվում՝ դատական նիստերի քարտուղարը:
«Դատավոր»	դատական իշխանություն իրականացնող յուրաքանչյուր անձ՝ անկախ նշանակման եղանակից:
«Դատավորի ընտանիքի անդամներ»	դատավորի կինը/ամուսինը, որդին, դուստրը, փեսան, հարսը և ցանկացած այլ մերձավոր բարեկամ կամ անձ, ով հանդիսանում է դատավորի գործընկերը կամ աշխատողը և բնակվում է դատավորի տանը:
«Դատավորի ամուսին/կին»	դատավորի ընտանեկան զուգընկերը կամ ցանկացած սեռի այլ անձ, ով դատավորի հետ գտնվում է անձնական բնույթի սերտ հարաբերությունների մեջ: